

«NEW GENERATION»  
Humanitarian Non-Governmental  
Organization



«ՆՈՐ ՄԵՐՈՆԳ»  
Մարդասիրական Հասարակական  
Կազմակերպություն

# Ի՞՞ՆՁ Է ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Սույն գրքույկը հրատարակել է «Նոր Մերոնգ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը  
Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Հայաստան, Երևան, 2015թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	4
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	5
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՀԻՄՔԵՐԸ	6
Ռասայական խտրականություն	6
Լեզվական խտրականություն	7
Կրոնական խտրականություն	7
Տարիքային խտրականություն	8
Ընտանեկան կամ ամուսնական կարգավիճակով պայմանավորված խտրականություն	9
Քաղաքական կամ այլ հայացքներով պայմանավորված խտրականություն	9
Գենդերային խտրականություն	10
Առողջական կարգավիճակով պայմանավորված խտրականություն	10-11
Մեռական կողմնորոշմամբ պայմանավորված խտրականություն	12
Մարդկանց արտաքինով պայմանավորված խտրականություն	12

Կենսակերպով պայմանավորված խտրականություն	13
Սոցիալական ծագմամբ պայմանավորված խտրականության	13
Գենետիկական խտրականություն	13
<b>ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ</b>	<b>14-17</b>
<b>ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ</b>	<b>18</b>
<b>ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՍԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>19-20</b>
<b>ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՍ</b>	<b>20</b>
<b>ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ</b>	<b>21</b>
<b>ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ ԴՈՒ՝ ՈՐՊԵՍ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՂ</b>	<b>21</b>
<b>ՆՇԱՆԱՎՈՐ ՕՐԵՐ</b>	<b>22-23</b>

## Ի՞նչ է ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Խտրականություն» տերմինն առաջացել է լատինական «discrimire» բառից, որը նշանակում է «առանձնացնել, տարբերել, տարբերակել»:

**Խտրականությունը էապես նման իրավիճակում որոշակի հատկանիշներով օժտված անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դրսևորումն է՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքի կամ ողջամիտ բացատրության:**

Այն դրսևորվում է մարդկանց նկատմամբ անհանդուրժողական վերաբերմունքով նրանց ռասայի, մաշկի գույնի, ազգային կամ սեռական պատկանելության, սեռական կողմնորոշման, քաղաքական կամ կրոնական հայացքների, լեզվի և այլ պատճառներով:

Խտրականությունը գոյություն ունի ամենուր, և, չնայած խտրականության դեմ արգելքն ամրագրված է միջազգային փաստաթղթերում ու օրենսդրական ակտերում, ուղղակի խտրականությունը, անուղղակի խտրականությունը, խտրականության հրահրումը, ենթադրության վրա հիմնված խտրականությունը և ատելության կոչերը շարունակում են մնալ խտրականության հիմնական տեսակները, և խտրականության շարունակում են ենթարկվել երեխաները, կանայք, մեծահասակները, հաշմանդամություն ունեցող անձինք, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրողները, ազգային և կրոնական փոքրամասնությունները, տարբեր քաղաքական հայացքներ ունեցող և այլ մարդիկ:

## ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Որպես խտրականության պատճառներ կարող են հանդես գալ անձի ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը կամ դավանանքը, քաղաքական և այլ համոզմունքները, ազգային, էթնիկ կամ սոցիալական


ծագումը և դրությունը, քաղաքացիությունը, առողջական կարգավիճակը, հաշմանդամությունը, տարիքը, սոցիալական, ընտանեկան կամ ամուսնական կարգավիճակը, զբաղվածության բնույթը, սեռական կողմնորոշումը, գենետիկական հատկանիշները կամ որևէ այլ հանգամանքներ:

Խտրականության հետևանքով մարդիկ հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով օգտվել սեփական իրավունքներից և ազատությունից կամ իրագործել դրանք:

Խտրականությունը ազդում է հասարակության լայն շերտերի վրա, ինչն էլ հանգեցնում է նախապաշարմունքի կամ կանխակալ վերաբերմունքի ձևավորմանը:

# Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ կարող է դառնալ խտրականության գոհ:

## ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ՀԻՄՔԵՐԸ



### Ռասայական խտրականություն

Ըստ ռասայական խտրականության վերացման մասին միջազգային կոնվենցիայի՝ ռասայական խտրականությունը սահմանվում է որպես «ռասսայով, մաշկի գույնով, գենետիկ, ազգային կամ էթնիկ ծագմամբ պայմանավորված ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ գերադասում, ինչը նպատակ ունի կամ հանգեցնում է մարդու իրավունքները հավասար հիմքերով ճանաչելու, կիրառելու կամ իրականացնելու, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ ոլորտներում մարդու հիմնական ազատությունների վերացմանը կամ նվաստացմանը»:

- **Ռասիզմը** մեկ ռասայի՝ մյուսի նկատմամբ ունեցած հատուկ գերակայության մասին գիտակցական կամ անգիտակցական համոզմունքն է:

- **Քսենոֆոնիան / այլատյացությունը** օտար, անծանոթ, արտասովոր և ուրիշների համար անընկալելի երևույթների նկատմամբ դրսևորված ատելությունն է:
- **Նացիոնալիզմը / ազգայնականությունը** ազգի արժեքների և պետականության ձևավորման գործընթացում վերջինիս գերակայությունն է:
- **Էթնոցենտրիզմը** գերիշխող մշակույթից տարբեր մշակույթի խտրական ընկալումն է:

## Լեզվական խտրականություն

**Մարդու նկատմամբ** բացասական վերաբերմունքն է վերջինիս կողմից օգտագործվող լեզվի պատճառով, ինչը մատնանշում է պատկանելություն կոնկրետ էթնիկ խմբի:



## Կրոնական խտրականություն

**Կրոնի կամ հավատքի** վրա հիմնված խտրականություն, որի նպատակն է հրաժարվել կամ նվաստացնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների՝ հավասարության սկզբունքի հիման վրա ճանաչումը կամ իրականացումը:

## Տարիքային խտրականություն



**Տարիքային խտրականությունը** արտահայտվում է միայն այն մարդկանց հետ համագործակցելու և նրանց աղեկվատ ընկալելու պատրաստակամության մեջ, որոնք համապատասխանում են նախապես հաստատված տարիքային չափանիշին: Տարիքային խտրականությունը կարող է լինել բաց (աշխատանքի ընդունման տարիքային սահման), և փակ (պրոֆեսիոնալ աճի պոտենցիալ բացակայություն մեծահասակների մեջ կամ նրանց հարուստ փորձառություն):

- **Էդալտիզմը** տարիքով ավելի մեծ մարդու կողմից երիտասարդին վիրավորելն է վերջինիս տարիքի պատճառով:
- **Ջեյնիզմը** երիտասարդներին նախապատվություն տալն է, երբ նկատի է առնվում այն հանգամանքը, որ երիտասարդներն ավելի կենսունակ և/կամ ֆիզիկապես ավելի գեղեցիկ են, քան տարիքով մեծ մարդիկ:
- **Էդալտոցենտրիզմը** ավագ սերնդի չափազանցված եսակենտրոնությունն է:

Տարիքային խտրականությունը կարող է հանգեցնել մի շարք վտանգների, մասնավորապես



## **Ընտանեկան կամ ամուսնական կարգավիճակով պայմանավորված խտրականություն**

**Ամուսնական կարգավիճակ հասկացությունը** ներառում է և գրանցված, և չգրանցված ամուսնական հարաբերությունները և վերաբերում է ամուսնացած, ամուսնալուծված կամ չամուսնացած անձանց, ովքեր ամուսնական հարաբերությունների մեջ են գտնվել նույնասեռ կամ տարասեռ անձանց հետ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ հարաբերությունները ներպետական օրենսդրական համակարգում իրավաբանորեն ճանաչված են, թե՛ ոչ: Ամուսնական կարգավիճակի հիմքով խտրականությունը կարող է ուղեկցվել այլ հատկանիշներով խտրականությամբ: Ծնողական կարգավիճակ հասկացությունը ներառում է ոչ միայն կենսաբանական, այլ նաև ինամատար ծնողներին և ինամակալներին:

## **Քաղաքական հայացքներով պայմանավորված խտրականություն**

**Քաղաքական կամ այլ հայացքներով պայմանավորված խտրականություն** հաճախ տեղի է ունենում հանրային ծառայությունների ոլորտում և աշխատանքային հարաբերություններում, երբ աշխատանքի ընդունելու, աշխատանքից ազատելու, աշխատավարձի, արձակուրդի, կարգապահական պատասխանատվության և այլ որոշումները կայացվում են՝ հաշվի առնելով անձի քաղաքական հայացքները, նրա՝ արհմիութենական շարժումներին մասնակցած լինելու և այլ փաստերը, այլ ոչ թե տվյալ աշխատանքը կատարելու՝ նրա մասնագիտական ունակությունները:

Քաղաքական կամ այլ հայացքներով պայմանավորված խտրականության դեպքում պաշտպանության են ենթակա այն գործողությունները, որով անձը արտահայտել է իր անհամաձայնությունը իշխող քաղաքական սկզբունքներին, համակարգին կամ իշխանությանը: Պաշտպանության ենթակա է այլախոհ հայացքների, գաղափարների արտահայտումն առհասարակ:

## **Գենդերային խտրականություն**



Մեռական կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված խտրականություն մարդու նկատմամբ, ինչը հասարակության մեջ գոյություն ունեցող գենդերային կարծրատիպերի հետևանքն է: Հատկապես սեռական հիմքով խտրականությունը ի հայտ է գալիս աշխատանքային բնագավառում (աշխատանքի ընդունելիս, աշխատանքի դիմաց վարձատրելիս), ընտանեկան կյանքում (գենդերային դերեր) են:

## **Առողջական կարգավիճակով պայմանավորված խտրականություն**

- ✚ **Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ դրսևորվող խտրականությունը** արդյունք է այնպիսի փոխազդեցության, որը տեղի է ունենում առողջական խնդիրներ ունեցող մարդկանց, նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի ու շրջապատի

սահմանափակումների միջև, որոնք խոչընդոտում են մյուսների հետ հավասար հիմունքներով լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը հասարակական կյանքում: Հաշմանդամություն ունենալու պատճառով դրսևորված խտրական վերաբերմունքը խնդրահարույց մասնավորապես աշխատանքային գործունեության և կրթություն ստանալու ընթացքում:

✚ **Էյբլիզմը** ֆիզիկական թերություններով մարդկանց ճնշումն է:

✚ **ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով** ապրող մարդկանց նկատմամբ դրսևորվող խտրականություն

Խտրականության այս տեսակը մեծ դժվարությամբ է ֆիկսացիայի ենթարկվում: Չարգացած երկրներում առավել հաճախ են բողոքներ ներկայացվում ՄԻԱՎ-ով ապրողների քաղաքացիների կողմից, որոնց իրավունքները խախտվել են աշխատանքի ընդունվելիս, զինվորական ծառայության մեկնելիս: Խարանի և խտրականության հետևանքով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդիկ աջակցություն չեն ստանում այն ժամանակ, երբ առավելագույնս ունեն դրա կարիքը: Նրանց կարող են վտարել աշխատավայրից, տնից և համայնքներից: Նրանք կարող են մահանալ աղքատության մեջ: Նրանց կյանքի տևողությունը կարող է կրճատվել, եթե ի վիճակի չլինեն հետևելու իրենց առողջությանը կամ օգտվելու բուժժառայություններից:

## Սեռական կողմնորոշմամբ պայմանավորված խտրականություն



ԼԳԲՏԻ անձինք ենթարկվում են վիրավորանքների և բռնության, իսկ որոշ երկրներում նույնասեռականությունը դիտվում է որպես հանցագործություն: Մինչդեռ վերջին ժամանակներում մոտ երկու տասնյակ երկրներ իրենց օրենսդրության մեջ ներառել են կետեր, որոնք արգելում են սեռական կողմնորոշմամբ և սեռական պատկանելությամբ

պայմանավորված խտրականությունը:

- ✚ **Հոմոֆոբիան** նույնասեռականության կամ դրա դրսևորման նկատմամբ բացասական վերաբերմունքի տարբեր ձևերի ընդհանրական ձևակերպումն է:
- ✚ **Հետերոսեկսիզմը** խտրականությունն է ԼԳԲՏ մարդկանց նկատմամբ:

## Մարդկանց արտաքին ու տեսքի նկատմամբ դրսևորվող խտրականություն

- ✚ **Մարդկանց արտաքին տեսքի նկատմամբ դրսևորվող խտրականությունը** կամ կանխակալ վերաբերմունքը ենթադրում է գեղեցկության և գրավչության չափանիշների ստեղծում և այն մարդկանց իրավունքների ոտնահարում, որոնք չեն համապատասխանում այդ չափանիշներին: Խտրականության այս տեսակը դրսևորվում է հատկապես աշխատանքային հարաբերությունների մեջ:

## **Կենսակերպով պայմանավորված խտրականություն**

Գործատուի տեսանկյունից ծխելը, գեր քաշը կամ հիպերտոնիան կարող են համարվել թերություններ, ուստի նման հատկանիշներ ունեցող աշխատակիցները ենթարկվում են աշխատանքից ազատման հավելյալ վտանգի:

## **Սոցիալական ծագմամբ պայմանավորված խտրականության**

**Սոցիալական ծագմամբ պայմանավորված խտրականությունը** լայն տարածում ունի մասնավորապես ասիական հասարակության մեջ: Օրինակ, չինական հասարակարգում գյուղական համայնքի ներկայացուցիչները չունեն քաղաքաբնակների արտոնությունները:

ՀՀ-ում մարզերում ապրող բնակչությունը ենթարկվում է խտրականության քաղաքային բնակչության կողմից՝ դիտվելով որպես երկրորդ դաս: Ավելի բարեկեցիկ ընտանիքների ներկայացուցիչները նախակրթական հաստատություններում, միջնակարգ և բարձրագույն կրթական հաստատություններում ավելի դրական վերաբերմունքի են արժանանում, քան ոչ բարեկեցիկ ընտանիքների ներկայացուցիչները:

## **Գենետիկական խտրականություն**

Գենետիկական խտրականությունը դրսևորվում է այն մարդկանց նկատմամբ, որոնք ունեն կամ հակված են ունենալու գենետիկ մուտացիա, ինչը կարող է պատճառել կամ բարձրացնել ժառանգական խանգարումների վտանգը: Խտրականության այս տեսակը շատ հաճախ հիմնվում է ոչ այնքան մարդու արժանիքների, որքան նրա գենոֆոնդի վրա:

## ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

### Ուղղակի խտրականություն

Սա խտրականության առավել բացահայտ և տարածված տեսակն է: Ուղղակի խտրականությունը ներառում է որոշում, գործողություն կամ անգործություն, որն ուղղված է կոնկրետ անձի կամ

անձանց խմբի դեմ և որոնց արդյունքում անձը հայտնվում է նվազ բարենպաստ իրավիճակում այլ անձանց համեմատ: Խտրականության այս տեսակի հիմնական հատկանիշն այն է, որ գործողությունը կամ անգործությունը ուղղված է կոնկրետ անձի կամ խմբի դեմ և ուղղակիորեն իրավական հետևանք է առաջացնում:

### Անուղղակի խտրականություն

Անուղղակի խտրականությունը ուղղակի խտրականությունից տարբերվում է նրանով, որ կիրառվում է ոչ թե կոնկրետ անձի, այլ բոլորի նկատմամբ և տվյալ անձի նկատմամբ կիրառվում է

առերևույթ չեզոք կերպով: Անուղղակի խտրականությունն կարող է համարվել օրենքը, քաղաքականությունը, պայմանը, գործողությունը, անգործությունը, պրակտիկան, որոնց կիրառման դեպքում կոնկրետ անձը կամ անձանց խումբը գրկվում է որոշակի իրավունքներից կամ արտոնություններից:

## Ասոցացված խտրականություն

Ասոցացված (գուգորդված) խտրականությունը անձի նկատմամբ խտրական վերաբերմունք է, որը թեև ուղղված է տվյալ անձին, սակայն պայմանավորված է մեկ այլ անձին առնչվող պաշտպանված հատկանիշով:

## Ջետապնդում

«Ջետապնդում» անձի նկատմամբ ցանկացած անցանկալի վերաբերմունք է, որի արդյունքում նրա շուրջ ստեղծվում է կամ որի նպատակն է նրա շուրջ ստեղծել ոչ բարյացակամ, մերժողական, թշնամական,

նվաստացուցիչ, վիրավորական միջավայր, որի արդյունքում նվաստացվում է անձի արժանապատվությունը պաշտպանված հատկանիշերից որևէ մեկով: Նշված ձևակերպումից բխում է, որ դիտավորության առկայությունը կարևոր չէ: Ավելին, կարևոր չէ, որ գործողությունները ուղղված լինեն տվյալ անձի նկատմամբ: Ցանկացած դեպքում եթե անձը գտնում է, որ իր շուրջ ծավալված (թեկուզ և նրան չուղղված) անցանկալի վերաբերմունքից, զարգացումներից վիրավորվում է իր արժանապատվությունը, կամ նրա շուրջ ստեղծվում է վերը նկարագրված միջավայրը, նա կարող է պնդել, որ ենթարկվում է հետապնդման: Այսինքն՝ հետապնդման օբյեկտիվ հատկանիշի շեմը շատ ցածր է, և պաշտպանության միջոցի մեկնարկը անձի ընկալումն է:

## **Սեռական ոտնձգություն**

Ի տարբերություն հետապնդման՝ սեռական ոտնձգությունը պետք է ուղղված լինի կոնկրետ անձի դեմ և կատարված լինի գենդերային հատկանիշով

պաշտպանված հատկանիշի հիման վրա: Սեռական ոտնձգությունը կարող է դրսևորվել խոսքով, ֆիզիկական եղանակով կամ գրավոր, որն ուղղված է կամ որի արդյունքում անձը կարող է վիրավորվել, նվաստացված զգալ, ստորացվել կամ վախենալ: Մեկ անգամ կատարված ակտը արդեն բավարար է սեռական ոտնձգություն պնդելու համար. անհրաժեշտ չէ, որ նման ակտը կրկնվի:

## **Խտրականության հրահրում կամ դրդում**

Խտրականության հրահրումը կամ դրդումն անձի կամ անձանց խմբի նկատմամբ խտրականության կամ նախապատվության դրսևորման հրահանգ է, ցուցում կամ կոչ:



## Վիկտիմիզացիա

Վիկտիմիզացիան անձի նկատմամբ բացասական հետևանքներ առաջացնող գործողություն կամ անգործություն է, որը կատարվում է զուտ այն պատճառով, որ տվյալ անձն իր իրավունքները

պաշտպանելիս դիմել է իրավական պաշտպանության որևէ միջոցի կամ ներկայացրել է խախտումների մասին տեղեկատվություն իրավասու պետական կամ այլ մարմինների՝ այդ թվում նաև խտրականության մասին: Խտրականության նշված եղանակը հաճախ տեղի է ունենում աշխատատեղում: ՀՀ իրավական համակարգում վիկտիմիզացիա հասկացությունը սահմանված չէ: Դա էապես դժվարացնում է նման խախտման դեմ իրավական պաշտպանությունը:

## Սեգրեգացիա

Սեգրեգացիան ցանկացած գործողություն է կամ անգործություն (այդ թվում՝ կառուցակարգ, պրակտիկա), որով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք առանձնացվում, տարբերակվում ու

արդյունքում մեկուսացվում են այլ անձանցից՝ պաշտպանված հատկանիշներից որևէ մեկով: Առավել հաճախ պատահում է ռասայական հիմքով սեգրեգացիա: Սեգրեգացիան որպես կանոն ասոցացվում է ռասիզմի և ատելության խոսքի հետ: Հետևաբար, հայցվորը կարող է օգտվել իրավական պաշտպանության այն եղանակներից, որոնք նախատեսված են ռասիզմի, ատելության խոսքի համար:

# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԵՐԸ

Խտրականության արգելք սահմանող նորմերը ստանդարտ ձևակերպումներով ամրագրված են բազմաթիվ իրավական փաստաթղթերում, որոնք, սակայն, թերանում են ապահովել իրավական պաշտպանության միասնական, ամբողջական և արդյունավետ համակարգ: Արդյունքում առաջանում են բազմաթիվ իրավական բացեր, որոնք նաև կարելի է լրացնել միջազգային իրավունքի այն նորմերով, որոնք Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է: Մարդու իրավունքները խախտվելու դեպքում վերջինս կարող է դիմել հետևյալ մարմիններին՝

✚ Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ներ

✚ Մարդու իրավունքների պաշտպան

✚ ՀՀ Դատական մարմիններ

✚ ՀՀ Վարչական մարմիններ

✚ Մարդու իրավունքների եվրոպական դատարան

# ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՄԲ ՉԲԱՂՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ



## ՄԻԱՎՈՐՎԱՆ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

- ՄԱԿ-ի ռասայական խտրականության վերացման հանձնաժողով
- ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատար
- Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով իրավունքների կոմիտե:
- Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող
- Հատուկ զեկուցող փոքրամասնությունների հարցերով
- Հատուկ զեկուցող ռասիզմի ժամանակակից ձևերի, ռասայական խտրականության, քսենոֆոբիայի եւ հարակից անհանդուրժողականության հարցերով:

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Ռասսիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով
- Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն(ԵԱՀԿ)
- Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը
- Ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն հանձնակատարի գրասենյակը

## ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Միջազգային կոնվենցիաների վավերացումը, համապատասխան օրենքների ընդունումը խտրականության դեմ պայքարի առաջին քայլերն են: Սակայն վերոնշյալ փաստաթղթերն ունեն նվազագույն արդյունավետություն, եթե չեն կիրառվում գործնականում: Խտրականության կանխարգելման համար պետք է դրսևորել քաղաքական կամք և ունենալ աջակցություն հասարակության լայն շերտերի կողմից: Այս առումով կարևոր է հասարակական կազմակերպությունների և նախաձեռնությունների, ինչպես նաև ԶԼՄ-ների դերը:

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Մարդու իրավունքների ոլորտում կրթությունը այն մեթոդների և ձևերի ամբողջությունն է, որը կարելի է կիրառել ոչ ֆորմալ և ֆորմալ կրթության մեջ՝ մարդկանց իրավագիտակցությունը բարձրացնելու համար: Մարդու իրավունքի ոլորտում կրթության պահանջներն են.

- ✓ հարգանք մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ,
- ✓ սեփական անձի և ուրիշների մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքի զգացում,
- ✓ մշակութային, ազգային, էթնիկ, կրոնական, լեզվական և այլ փոքրամասնությունների/տարբերությունների նկատմամբ հարգանք:

## Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ ԴՈՒ՝ ՈՐՊԵՍ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՅ

**Եթե Դուք կամ Ձեր բարեկամները, ծանոթները դարձել եք  
խտրականության զոհ կամ Ձեզ հայտնի են դարձել  
խտրականության դեպքեր, ապա կարող եք ԴԻՄԵԼ ԵՎ**

**ՁԱՆԳԱՅԱՐԵԼ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ գործող  
իրավապաշտպան կազմակերպություններին:**

1960թ.-ի մարտի 21-ին Հարավային Աֆրիկայում ցեղային խտրականության ռեժիմի օրենքների դեմ Շարպլինիում անցկացվող խաղաղ բողոքի ցույցի ժամանակ ոստիկանությունը կրակ բացեց և սպանեց 69 մարդու: Ռասսայական խտրականության վերացման դեմ պայքարի միջազգային օր անցկացվում է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 21-րդ նստաշրջանի 1966թ.-ի հոկտեմբերի 26-ի որոշմամբ և ամեն տարի նշվում է մարտի 21-ին:

**ՄԱՐՏԻ 21**

**Ռասսայական խտրականության վերացման միջազգային օր**

Ամեն տարի հունիսի 20-ը նշվում է որպես Փախստականների համաշխարհային օր, որը հաստատվել է 2000թ.-ին, ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի որոշմամբ:

**ՀՈՒՆԻՍԻ 20**

**Փախստականների համաշխարհային օր**

1938թ.-ի նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Գերմանիայում իրականացվեց հրեաների զանգվածային ջարդ, այրվեցին հրեաների դպրոցները, սինագոգները, ինչպես նաև նրանց պատկանող խանութները: Այդ օրը պատմության մեջ հիշատակվում է որպես «Բյուրեղապակյա գիշեր» կամ «Կոտորված ցուցանակների գիշեր»: «Բյուրեղապակյա գիշեր»-ի սարսափելի դեպքերից էլ սկիզբ առավ Հոլոքոստը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում մոտ 6 միլիոն հրեաների ծրագրավորված կոտորածը: Ֆաշիզմի, ռասսիզմի և

**ՆՈՅՆԵՄԲԵՐԻ 9**

**Ֆաշիզմի, ռասսիզմի և անտիսեմիտիզմի դեմ պայքարի օր**

հակասեմիտիզմի դեմ պայքարի միջազգային օրվա շրջանակներում աշխարհի բազմաթիվ երկրներում անց են կացվում թեմատիկ միջոցառումներ, ցույցեր և այլն:

1995թ.-ի նոյեմբերի 16-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ-պետությունները հռչակագիր ընդունեցին հանդուրժողականության սկզբունքների վերաբերյալ: 1996թ.-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան անդամ-պետություններին առաջարկեց ամեն տարի նոյեմբերի 16-ը նշել որպես Հանդուրժողականության միջազգային օր՝ ուղղված ուսումնական հաստատություններին և լայն հասարակայնությանը:

1948թ.-ի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: 1950թ.-ին Գլխավոր Ասամբլեայի առաջարկով տարբեր պետություններ և կազմակերպություններ, իսկ այսօր նաև ամբողջ աշխարհը դեկտեմբերի 10-ը նշում է որպես Մարդու իրավունքների միջազգային օր: Մարդու իրավունքների հռչակագիրը, որը թարգմանվել է աշխարհի ավելի քան 360 լեզվով, այն հիմնական փաստաթուղթն է, որում առաջին անգամ ամրագրվեցին մարդու և անհատի հիմնական իրավունքները:

## **ՆՈՅՆՄԲԵՐԻ 16**

**Հանդուրժողականության  
միջազգային օր**

## **ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10**

**Մարդու իրավունքների  
օր**





**«ՆՈՐ ՍԵՐՈՆՆԴ» «NEW GENERATION»  
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ HUMANITARIAN NGO**

Էլ-հուգտ: [newgenerationngo@gmail.com](mailto:newgenerationngo@gmail.com) | <http://nnggo.net/>

